ԱՐՍԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՌԴ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ (2000-2005ԹԹ.)

1. Վարչատարածքային կառավարման խնդիրները

Նախագահ ընտրվելուց հետո Վ.Պուտինի առաջին խնդիրը դարձավ ՌԴ-ն կենտրոնի և սուբյեկտների միջև սահմանադրական հակասությունների վերացումը: Աշխատանքն արդյունավետ կազմակերպելու համար նախագահը ՌԴ-ը բաժանեց 7 դաշնային օկրուգների[1], յուրաքանչյուրում նշանակելով նախագահի լիազոր ներկայացուցիչ[2]: Նրանք նախ և առաջ պետք է սեղմ ժամկետներում շտկեին հայտնաբերված բոլոր սահմանադրական շեղումները[3] դաշնության սուբյեկտներում: Նախագահի քաղաքականությունը արտաքուստ հիշեցնում է ցարական Ռուսաստանի նահանգապետական կառավարման մեթոդներին[4]:

Վարչա-տարածքային խնդիրների շարքին էր պատկանում ՌԴ-ն Վերին պալատի՝ Սենատի կազմի ձևավորման սկզբունքների փոփոխության հարցը (խոսքը վերաբերվում էր Վերին պալատի ներկայացուցիչների ընտրման կարգին): Իբրև օրենսդրիր մարմին Սենատը կայացած չէր[5]: ՌԴ-ն վերին պալատը բաղկացած էր շրջանների ղեկավարներից, օրենսդիր մարմինների ղեկավարներից: Նախագահի առաջարկը շատ տրամաբանական և պարզ էր.

- բացառել տեղական գործադիր ներկայությունը սենատում,
- փոխարինել այն շրջաններից ընտրվող ներկայացուցիչներով,
- դարձնել այն մշտական գործող օրենսդրական մարմին[6]:

Նախաձեռնությունը չոգևորեց սուբյեկտներին: Վերջիններս օրինագծին դեմ քվեարկեցին, իսկ Պետ. Դումայում օրինագծի քննարկման ամենաեռանդուն շրջանում նախագահը առաջարկեց «համաձայնեցնող հանձնաժո-

---

[1] Указ Президента РФ N 849 от 13 мая 2000 г. № 849 "О полномочном представителе Президента Российской Федерации"

[2] А.Усягин.,Политическое управление и его территориальные аспекты:российский опыт.,2005г.,Ст.229-235.

[3] Նույնը.Ст 221-229, Указ Президента РФ N 849 от 13 мая 2000 г. № 849 "О полномочном представителе Президента Российской Федерации"

[4] Л.Новикова.,И.Сиземская.,Три модели развития Росии., М 2000г, Ст. 35-37.

[5] И Гранкин., Парламент России., М 2001г., Ст 52-53.

[6] Государственная Дума Федерального Собрания РФ. третий созыв.,Сборник.,Заседание: 41(489)19.07.2000., Бюлл. N 41(489) Ч.1: Стр.5-64

դով»[7] ստեղծել օրինագծի արագ ընդունման համար[8]: Հանձնաժողովը ստեղծվեց հուլիսի 8-ին և անցկացրեց 4 նստաշրջան[9]: Շրջանները չէին ցանկանում կորցնել 1993-1998թթ ձեռք բերված լայն լիազորությունները[10], միևնույն ժամանակ նրանք հասկանում էին, որ նախագահն ի վերջո կարող է հարցը դնել համաժողովրդական հանրաքվեի[11] և խաղից դուրս վիճակում թողնել իրենց:

Սենատորների առաջադրումը հակասում էր իշխանությունների տարանջատման սկզբունքներին[12]: Վարչա-իրավական համակարգի լիազորություններով օժտված օրենսդիր մարմինը պարարտ հող էր ստեղծում օրենքների նկատմամբ անհետևողական վերաբերմունքի համար: Անհնարին էր վերահսկողություն պահանջել այն մարմիններից, որոնց ղեկավարներն իրենք էին կազմում վերին պալատը ՌԴ-ում[13]: Ներկայանալով իբրև օրենսդիրներ նրանք այնուհանդերձ զուրկ էին մշտական գործունեության լիազորություններից[14]: Վ.Պուտինի առաջարկը շատ պարզ լուծման տարբերակ էր, որը փոփոխություն չմտցնելով երկրի քաղաքական համակարգի մեջ վերափոխում էր նրա առանձին մարմնի ներքին կառուցվածքն ու հավասարակշռում նախկին բևեռացված վիճակը: Այս հարցի շուրջ շատ իրարամերժ տեսակետներ են հնչում[15]: Արդյունքում օրինագիծը ընդունվեց սկզբնապես Պետ Դումայի կողմից 2000թ. հուլիսի 19-ին[16], իսկ հետագա լարված քննարկումներից հետո նաև Դաշնային Խորհրդի կողմից՝ 2000թ. հուլիսի 26-ին: Ընդունվեց հակառակ Սենատում տեղ գտած տրամադրությունների, որի արդյունքում այն ձգձգվեց: Պարադոքսն այն է, որ սահմանադրական օրինագծի փոփոխման հարցում Վ.Պուտինի «Միասնությունը» լիարժեք օժանդակություն գտավ ի դեմս «Կոմկուսի»[17] ինչը ևս ծանրակշիռ փաստարկ դարձավ սուբյեկտների ղեկավարներին սաստելու համար: Արդյունքում «ՌԴ-ն Դաշնային Խորհրդի կազմավորման մասին» օրենքով[18] Վերին Պալատը այսուհետ կազմավորվելու էր շրջանների ներկայացուցիչներից: ՌԴ-ն յուրաքանչյուր սուբյեկտ ներկայացնում էր երկու պատգամավոր, որոնցից մեկին ընտրում էր տվյալ սուբյեկտի օրենսդիր մարմինը,

---

[7] Государственная Дума Федерального Собрания РФ, третий созыв., Сборник:., Заседание: 41(489) 19.07.2000., Бюлл. N 41(489) Ч.1:Стр.5-6.

[8] Независимая газета. 72 (2134) от 20. 04. 2000г.

[9] Государственная Дума Федерального Собрания РФ, третий созыв.,Сборник:.,Заседание: 41(489) 19.07.2000., Бюлл. N 41(489) Ч.1; Стр.5-64

[10] Новая Газета. № 48 от 10. 07. 2000 г.,Ст 1,3.

[11] Конституция РФ., М 1996г., статья 84., Ст. 36.

[12] Конституционне (Государственное) право зарубежных стран. Т.1-2., М. 1996г. Ст. 310.

[13] И.Гранкин.,Парламент России., М.2000г., Ст.40..

[14] Նույնը Ст. 43-44.

[15] Аргументы и факты, N 37, Сентябрь 2000г., Ст 1-4.

[16] Стенограмма заседания Гос думы. 19 июня 2000г. Фонд УИС. Россия. Сборник документов.

[17] Նույնը, ст 4.

[18] Российской газете, № 152, 08.08.2000 г.

մյուսին՝ սուբյեկտի ղեկավար: Պատգամավորների լիազորությունները գործում էին այնքան, որքան գործում էր նրանց լիազորող մարմինը[19]: Սակայն ՌԴ-ն սուբյեկտների ներկայացուցիչների կողմից այն հավանության արժանացավ մեկ այլ պատճառով: ՌԴ-ն սուբյեկտների նման ընդդիմադիր կեցվածքը գալիս էր դեռ 90-ականներից: Դրա միակ պատասխանատուն Բ.Ելցինն էր, քանի որ նրա դաշնային քաղաքականությունը չէր համապատասխանում իր դիրքին[20]: Սուբյեկտներին համոզելու համար պետք էր այլ ծանրակշիռ փաստարկ. Վ.Պուտինը գնաց վճռական քայլի՝ առաջ քաշելով «Պետական խորհրդի» գաղափարը[21]: Այն քննադատվեց դումայական խմբավորումների կողմից[22], բայց ՌԴ-ն սուբյեկտների ղեկավարները հասկացան առաջարկի էությունը: «Պետական խորհուրդն» այն հրապարակն էր, որտեղ նախագահը Սուբյեկտների ղեկավարների մասնակցությամբ քննարկվելու էր ՌԴ-ն ռազմավարական հարցերը[23]: Սուբյեկտների զիջեցին Սենատի հարցում[24] «Պետական խորհրդում» տեղ ունենալու համար[25]:

Այնուհանդերձ գործադիր իշխանության աշխատանքները արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ էր կարգի բերել իշխանական հորիզոնը. ինչը ՌԴ-ն ներքաղաքական հարաբերությունների հիմանական կռվախնձորն էր: Այս խնդիրը իշխանության թևերի առճակատման պատճառ դարձավ (1992-1993թթ)[26]: Թեև Բ.Ելցինի 1993թ. սեպտեմբերի 21-ի նախագահ N1400 հրամանագրով ՌԴ-ում հաստատեց «Սուպերնախագահական» պետական կարգը, բայց ստեղծված հասարա-քաղաքական անբարենպաստ պայմաններում գործնական ի զորու չեղավ լուծվել իշխանական հորիզոնի խնդիրը[27]: 1993-1999թթ. ցույց տվեցին, որ Դաշնության սուբյեկտները ի վիճակի չեն լուծել առկա սոցիալ-տնտեսական խնդիրները տեղերում[28]: Այս հարցում վերջակետ դրեց Վ.Պուտինը 2004թ. մարտի 9-ին «Գործադիր իշխանության Դաշնային մարմինների համակարգի և կառուցվածքի մասին»[29] օրենքով, որով վերացվեցին ավելորդ նախարարությունները 30-ից հասցվելով 17-ի[30]:

---

[19] Сборник Законов РФ., М 2000 № 32., О порядке формирования Совета Федерации Федерального Собрания Российской Федерации., Ст. 3336.

[20] Д.Ольшанский., Полоитическая психология., СПб., 2002г., Ст. 163-168

[21] Аргументы и факты N 33, март 2001г. Ст 5.

[22] Коммерсантъ № 138 (2023) от 29.07.2000

[23] Деловая газета. N 39(70) от 05.10.2000

[24] Деловая газета N 37(112) от 18.09.2001

[25] Аргументы и факты N 32, август 2000 г. Ст 9

[26] О. Румянцев., Из истории создания Конституции РФ. (1990-1993 гг.) Т 3., Ст .957.

[27] Независимая Газета., 80 (2142) от 04. 05. 2000г.

[28] Коммерсантъ № 232 (2362) от 20.12.2001

[29] Указа Президента Российской Федерации от 9 марта 2004г. № 314 .“О системе и структуре федеральных органов исполнительной власти“., Сборник Законов РФ 2001. № 7. Ст. 608

[30] Նույնը

Հակառակ համեմատական ավելացան դաշնային ծառայություններն ու գործակալությունները: ՌԴ-ն սուբյեկտները զրկվեցին մինչ այդ ունեցած գործադիրի լիազորություններից:

2. Անվտանգություն խնդիրները

ՌԴ-ն ինքնավարության հռչակումից սկսած մինչ Վ.Պուտինի նախագահությունը այս հարցը մշտապես գտնվել էր երկրորդական խնդիրների շարքում: Այստեղ իր ազդեցությունն ունեցավ Վ.Պուտինի անվտանգության համակարգին մոտիկ լինելը: Նախագահը բացառեց որևէ տնտեսական ծրագրերի առաջադրումն ու իրագործումը առանց անվտանգության հայեցակարգի մշակման[31] և անվտանգության նոր ուղենիշների հաստատման[32]: Փոխվել էր վարչակազմը, փոխվել էր պետության քաղաքական կառուցվածքը, սակայն խնդիրը մնացել էր: Դեռ քարմ էին 90-ական թթ.-ների անվերահսկելի սեփականաշնորհման բացասական արդյունքները[33]: Առանց այդ խնդրի լուծման հնարավոր չէր երկրի կայուն տնտեսական զարգացման որևէ հեռանկար: Այդ պայմաններում հասարակության մեջ ուրվագծվում էր լուծման երկու տարբերակ.

ա.) Քաղաքական դիկտատուրա

բ.) Օրինականացված անարխիա

Առաջին տարբերակն արդեն փորձարկվել էր: Արդյունքները հուսադրող չէին: Երկրորդում երկիրը հայտնվել էր ԽՍՀՄ իրավա-քաղաքական համակարգի փլուզումից հետո: Վ.Պուտինը ընտրեց երրորդ ուղին «*Օրենքի դիկտատուրան*»[34]: Չևակերպումը լավագույնս արտահայտում է այն քաղաքական միտքն ու գործելակերպը, որը տեղ գտավ Վ.Պուտինի կառավարման ընթացքում: Եվ այն առավել կոշտ դրսևորվեց հատկապես անվտանգության համալիրի վերափոխման ընթացքում: Առաջին կետը բանակի վերազինման ու Ռազմա -Արդյունաբերական Համալի գործունեության[35] նոր ուղենիշների հաստատումն էր[36]: Արդյունքը 2001թ. ընդունված ՌԴ-ն ԶՈւ-ի կառուցման ծրագրերն էին[37]: Մոտեցումը այսպիսին էր, ուժեղացնել բանակի որակական կողմը՝ շեշտը դնելով նրա մոբիլիզացիոն պոտենցիալի վրա[38], իսկ վերափոխումը կատարել առկա բյուջետային միջոցների վերաբաշխումով[39]:

---

[31] Указа Президента Российской Федерацииот 10 января 2000 года N 24, о внесении поправок в Концепцию национальной Безопасности.

[32] Российская газета., 15 февраля 2000г., Ст.1.

[33] Известия N 197., 13 октября 1994г., Ст 1; N 146., 1 сентября 1995г, Ст 1., Аргументы и Факты N 32 сентябрь 1996, ст 5.

[34] Независимая газета 94 (2156) от 25.05.2000

[35] Власть № 48 (450), 04.12.2001

[36] Независимая газета 16.03.2000

[37] Мировая экономика и международные отношения., М 2004, № 8, Ст.68.

[38] Н Рыжков., Главный свидетель., М 2009г., Ст 227-228.

[39] Независимое военное обозрение 27.07.2001 г.

Անվտանգության ոլորտի հաջորդ քայլը վերաբերվում էր ներքին գործերի նախարարությանն ու Դաշնային անվտանգության ծառայության դերակատարման հստակեցմանը: Առաջին տեղում տնտեսական միջավայրի վերահսկողության խնդիրն էր[40], ինչի համար «Հարկային Ոստիկանությունը»[41] ձևափոխվեց առանձին կառույցի: Սրանով սկսեց «հավասար խաղի կանոնների» հաստատումը վերևից[42]:

3 Սոցիալ-տնտեսական խնդիրները

Նշված ուղղությամբ կատարված լուրջ քայլերը նպատակ ունեին ապահովելու սոցիալ-տնտեսական վերափոխումների բարենպաստ միջավայրը: Կառավարությունում ոչ բոլորն էին գոհ այդ քայլերից: Սակայն հարցն ուներ երկրորդ կողմը: Վ.Պուտինը դեմ էր Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող խոշոր միջազգային վարկերին, գտնելով, որ ՌԴ-ը ունի անհրաժեշտ ռեսուրսները տնտեսական դինամիկ զարգացման համար[43], ինչի համար 2005թ շտապ կարգով ՌԴ-ն կառավարությունը մարեց բոլոր միջազգային վարկերը և հրաժարվեց նոր վարկերից[44]:

Այս ընթացքում կառավարությունը ընդունեց մի շարք առանցքային օրինագծեր: Մասնավորապես հարկային շեմը իջեցվեց մինչև 13%, իսկ ավելի ուշ նաև որոշ դեպքերում հանվեց ավելացված արժեքի հարկը (ՀԴՀ)[45]: Արդյունքում 2002-2003թթ. տնտեսական աճը կազմեց 7%[46]: Կարող է տպավորություն ստեղծվել, որ այս քայլերը բխում էին նաև մոնոպոլիստների շահերից, սակայն դա այդպես չէր: Բանն այն էր, որ նրանց մեծ մասը կամ աշխատում էր կառավարության հովանու ներքո, կամ էլ ինքն էր նրա անդամը[47]: Բնականաբար այդ պայմաններում նրանք չէին վճարում նախատեսված հարկերը: Նրանց դժգոհությունը ոչ թե հարկերի բարձր կամ ցած լինելու մեջ էր, այլ առհասարակ դրանց չվճարելու: Նոր խաղի կանոները ամեն առումով «ձեռնտու» չէին նրանց: 2000-2004թթ. դարձան բնակչության սոցիալական բարելավման տարիներ[48]: Մոտեցումը թելադրված էր պետության կայուն հեռարան ստեղծելու նպատակով: Արդյունքը նրանց կենսաթոշակի բարձրացումներն էր:

4. Մշակութային խնդիրները

---

[40] Аргументы и факты., N 31 .2000г., Ст 4

[41] Указ президента РФ от 02. 01.2000 г. N 1272.

[42] Коммерсантъ № 147 (2516) от 20.08.2002

[43] Ю.Борцов. Владимир Путин. .М 2001г., ст. 441-444.

[44] Коммерсантъ Власть № 5(608) 07.02.2005 г

[45] Налоговый кодекс РФ. Часть вторая (117-фз от 5 августа 2000). Глава 23.Налог на доходы физических лиц; Сборник Законов РФ, М 2001 г., ст. 2289.

[46] Новая Газета. Касянов отчитался за 2003г год.

[47] Литературная газета N32-33 от 9-15 августа 2000.

[48] Сборник Законов РФ. М 2001г., Указ Президента РФ №1815 от 2 ноября 2000 г., и . Указ Президента РФ от 27.09.2000 N 1709.

ՌԴ-ն ինքնավարության հռչակումից սկսած մշակույթի զարգացման խնդիրը ևս թողնված էին ինքնահոսի: Սակայն 2000-2005թթ իրավիճակը այս հարցում փոխվեց հասարակության ներսում արտացոլելով երկու հակադիր բևեռներ:

ա.) Մշակույթը կարող է անկախ լինել պետությունից և զարգանալ ինքնահոս

բ.) Այն պետք է ծառայի պետությանը ելնելով ՌԴ-ն պետական շահերից

Այստեղ զգացվում է մշակութային դաշտը պետության հսկողության տակ վերադարձնելու ձգտումը: Կրեմլը ցանկանում է մշակութային դաշտն ամբողջությամբ բևեռել պետության միասնականության գաղափարի շուրջ: Սա լուրջ խնդիր է: Վերածնվող ուղղափառության պայմաններում խորհրդային գաղափարախոսության վերականգնումը անհնար է: Առանձին վերցրած նրանք կարող են նպաստել այդ գործընթացին: Կրեմլը իր քայլերը սկսեց պետական խորհրդանիշներից: Հիմնի, դրոշի և զինանշանի շուրջ երկար քննարկումներից հետո Կրեմլի, Դումայի[49] և Սենատի ընդհանուր համաձայնությամբ ԽՍՀՄ հիմնը[50] հաստատվեց իբրև ՌԴ-ն հիմնը[51]: Տեքստը սակայն փոխվեց[52]: Ցարական Ռուսաստանի կրողն որպես այդպիսի գոյություն չուներ, քանի որ 70 տարիներն այն արմատախիլ անելով վերափոխել էին, կերտելով սոցիալիստական հասարակության էքսպերեմենտալ տարբերակ[53]: Փոխարենը դեռ ողջ էին խորհրդային արժեքներով և գիտակցությամբ դաստիարակված քաղաքացիները[54]: Խորհրդային գերբը դարձավ բանակի խորհրդանիշ: ԽՍՀՄ գոյության ընթացքում ՌԴ-ում ապրող ժողովուրդը ունեցել էր բազմաթիվ էջեր, որոնք սրբություն էին նրա համար, որոնցից մեկը Հայրենական մեծ պատերազմն էր: Հետևաբար իբրև պետական գերբի ընտրեց ցարական Ռուսաստանի երկգլուխ արծիվը[55], իսկ խորհրդային շրջանում հասարակության համար սրբություն համարվող Հայրենականի հիշատակը կցվեց ՌԴ-ն բանակին: Ստացվեց հին և նոր խորհրդանիշների տրամաբանական սինթեզ: Պետականության հարցում հաստատվեց շարունակականությունը հանձինս ռուսական վաղեմի եռագույն դրոշի, բանակին կցված Կարմիր դրոշի և հնգանիստ աստղի:

---

[49] Государственная Дума Федерального Собрания РФ Третий созыв., стенограмма заседания 08.12.2000г., Бюлл. N 64(512) Ч.1:Стр.6-6, 26, 30, 34.

[50] Коммерсантъ № 228 (2113) от 05.12.2000

[51] Федеральный конституционный закон от 25 декабря 2000 г. N 3-ФКЗ, О Государственном гимне РФ

[52] Указ Президента РФ "О тексте Государственного гамна Российской Федерации"30.12. 2000 г.,№ 2110

[53] Российская Газета., 30. 12.1999г. В.В. Путин., "Россия на рубеже тысячалетии.»

[54] Коммерсантъ № 228 (2113) от 05.12.2000

[55] Деньги № 50 (303) от 20.12.2000

Վ.Պուտինն ու իր թիմը գնացին փորձված ռազմավարությամբ՝ օգտագործել հին արժեքային համակարգը և ամրապնդել նոր ձևավորվող քաղաքական համակարգի հիմքերը: Շատ ավելի ծանր վիճակում էին կրթության և գիտության համակարգի խնդիրները: 1990-ական թթ-ներին 4-5 անգամ ընկել էր կադրերի համալրման տեմպերը[56]: Բարձրորակ մասնագետների ավելի քան 60%-ը հեռացել էին արևմուտք առավել բարեկեցիք կյանք գտնելու ակնկալիքով[57]:

2000թ. հոկտեմբերի 4-ին կառավարությունն ընդունեց կրթության համակարգի զարգացման հայեցակարգը[58], որը մանրամասն քննարկվել էր ՌԴ-ն Պետական խորհրդի փակ նիստում: Հայեցակարգն առավել գործնական հիմքերի վրա տեղափոխվեց միայն 2001թ. դեկտեմբերի 29-ին[59], ծրագրի իրագործումը դնելով երկարաժամկետ հիմքերի վրա: Որոշվեց Դաշնային և շրջանային կրթահամալիրների համամասնությունը: Համապատասխանաբար 20% և 80%[60]:

Նման ծրագրերի ներդրումն ինքնին շատ արդյունավետ էր երկրի զարգացման համար: Սակայն կար մի բաց, որը հնարավոր չէր լրացնել այդ միջոցներով, խոսքը վերաբերվում է երիտասարդ կադրերի քաղաքում կենտրոնացման երևույթին: ՌԴ-ն ծայրամասերի սոցիալ-տնտեսական զարգացումն անհամաչափ էր ինչպես կենտրոնի այնպես էլ միմյանց միջև[61]: Երիտասարդ ընտանիքները առաջին տեղում դնում էին նյութական բարեկցությունն ու կարիերան[62]: Եթե անգամ կրթության ոլորտում ընդունված ծրագիրը լուծեր մասնագիտական ճգնաժամի խնդիրները և աշխուժացներ տնտեսական միջավայրը, ապա ուրբանիզացիայի արդյունքում ստեղծված դեմոգրաֆիական բացը դրանով չէր լուծվի (տվյալ դեպքում խոսքը դաշնային կենտրոնների շուրջ աննախադեպ բնեռացման մասին է) :

5. Դեմոգրաֆիական խնդիրը

ՌԴ-ն համար դեմոգրաֆիական խնդիրը ցավագիններից մեկն է: 90-ականներին վերափոխումների ընթացքում գործազրկության և աղքատության մեջ հայտնված բնակչությանը գերակշռող մասը չէր կարողանում ապահովել առօրյա մինիմումը: Նրանց զգալի մասը գալիս էր ՌԴ-ն կենտրոնական ու եվրոպական հատվածները, կամ հեռանում երկրից: Վիճակը հատկապես ծանր

---

[56] По данным Министерство Просвешения и Оброзования (МОПО) 2000г.
[57] Независимая газета., 25 (2087) от 11.02.2000
[58] Постановление Правительства Российской Федерации от 4 октября 2000 года, № 751.
[59] Распоряжение Правительства Российской Федерации 29 декабря 2001 года, № 1756-р.
[60] Аналитический вестник Совета Федерации ФС РФ. -2005. -№ 04 (256)
[61] Регионы Росии: Социал-Экономичесскис показательи. Статистичесскин сборник . М 2002г. Ст. 103.
[62] А. Михеева. Брак, семья, родительство:социологические и демографические аспекты: Новосиб.2001 Ст. 28

էր հեռավոր արևելյան շրջաններում: Ըստ ՌԴ-ն իմիգրացիոն ծառայության միայն Հեռավոր Արևելյան տարածքի բնակչությունը 1991-2002թթ. դրությամբ 8.04 մլն-ից նվազել է 7. 04 մլն-ի[63]: Կորուստը կազմել է մեկ միլիոն մարդ: Հեռացողը հիմնականում երիտասարդություն է: Ի լրումն 90-ականների ընթացքում արմատապես փոփվեցին բարոյա-էթիկական նորմերն ու ընտանիքի մասին նախկին պատկերացումները, որի արդյունքում կտրուկ ընկավ ծնելիության մակարդակը[64]:

ՌԴ-ն կենտրոնական, Հյուսիս-Կովկասյան և Եվրոպական շրջանները ավելի բարվոք վիճակում էին, քանի որ մշտապես համալրվում էին այդ տարածքներին սահմանակից ԱՊՀ երկրներից մշտական ներգաղթով, ինչը բացատրվում էր այդ երկրների ցածր կենսամակարդակով և աշխատանքային շուկայի բացակայությամբ: Սա էլ դարձավ այն բանալին, որով կառավարությունը որոշեց հակակշռել խնդրի հետևանքների: Մոտեցումն այսպիսին էր՝ փոխել իմիգրացիոն քաղաքականությունը, խրախուսել հատկապես ԱՊՀ երկրներից քաղաքացիների հոսքը դեպի ՌԴ-ն, ուղղել այն դեպի դեմոգրաֆիական ճգնաժամի շրջանները գործունեության նպաստավոր պայմաններ ստեղծելով նրանց համար[65]:

Սա նախատեսում էր փոփոխություններ իմիգրացիոն օրենքում, ինչն էլ կատարվեց: 2003թ. մարտի 1–ին վարչապետ Մ.Կասյանովը կարգադրություն ստորագրեց մշակել նոր իմիգրացիոն ռազմավարությունը և ներգրավել շրջանների ու իմիգրացիոն ծառայության շահագրգիռ մարմիններին[66]: Նոր մշակված հայեցակարգի շուրջ միակարծիք չէին Պետ.Դումայում: Նրանք անթույլատրելի էին համարում ներգաղթի հաշվին դեմոգրաֆիական կորուստները փոխհատուցելու պռակտիկային[67]: Այս բոլոր նախաձեռնության տրամաբանական շարունակությունը «ՌԴ-ն հայրենակիցներին վերաբնակեցման օժանդակելու մասին»[68] օրենքն է: Սակայն «հայրենակիցներ», բառի տակ հասկացվում էին նաև այն քաղաքացիները, որոնք ցանկանում էին վերաբնակվել ՌԴ-ն: Առաջին պահանջը ռուսերեն լեզվի լավ իմացությունն էր[69]: Ծրագիրը գործում էր ԱՊՀ երկրներում: Նրանք վերաբնակեցնում էին այն հատվածը, որը դաստիարակվել էր խորհրդային մշակույթով: ԱՊՀ երկրները ունեին առավել մոտ պատմական

---

[63] Аналитический Вестник № 9 (202) ст 56

[64] А.Михеева.,Брак,семья,родительство:социологические и демографические аспекты. Новосибирск., 2001г., Ст.27.

[65] О. Хараева Иммиграционная политика в Российской Федерации и странах Запада, Москва 2003 г. Ст 116.

[66] Правительство Российской Федерации, Распоряжение от 1 марта 2003 года № 256-р

[67] Л.Рыбаковского., Г. Кареловой., Демографическое будущее России.,М.2001. Ст. 36.

[68] Информационный бюлетень: Государственная программа по переселению в РФ, Указ Президента Российской Федерации от 22 июня 2006 г., N 637. М.2006 г. Ст.3.

[69] Նույնը Ст.4.

անցյալ, որի արժեքային համակարգի ձևափոխման գործընթացները ընթանում էին զուգահեռ: Նախընտրելի է վերաբնակեցնել նույն արժեքային համակարգով մտածող բնակչության, որոնք հեշտ կինտեգրվեն ՌԴ-ն պայմաններին: Ծրագիրը կրկնում է ցարական Ռուսաստանի վերաբնակեցման պրակտիկան[70], միայն այն տարբերությամբ, որ կատարվում էր հակառակ գործընթացը վերադարձ ռուսների և վերաբնակեցում ռուսացածների ու նրանց կողմնակիցների համար: Թեև այստեղ էլ վերաբնակեցման համար կար մեկ այլ նախապայման՝ հնարավորինս <u>ցածր տարիքային ցենզը</u>: ՌԴ-ն նոր կառավարությունը ընտրել էր դեմոգրաֆիական ճգնաժամից ելնելու էժանագին ճանապարհը:

6. Օրենքի դիկտատուրայի արդյունքները

Վ.Պուտինի առավել լայն վերափոխումների իրագործմանը կաշկանդում էր լուրջ հենարանի բացակայությունը: Նրա նախագահության առաջին շրջանի հիմնական նպատակը խաղի հավասար կանոնների հաստատմանն ուղղված հետևողական քայլերն էին: Չերթական հենարանը նրա համար դարձավ 2003թ. դեկտեմբերի 3-ին ՌԴ-ն Պետ Դումայի ընտրությունների արդյունքները: Որտեղ պարլամենտի ծայների 2/3 զբաղեցրին իշխանության կուսակցությունն ու կենտրոնամետ ուժերը, 306 մանդատ: Իսկ Կոմկուսը միայն 48[71]: **Единая Россия**- 223; **КПРФ**- 52; **ЛДПР**- 36; **Родина**- 37; Ուրիշ միություններ- 32; ինքնառաջադրվածներ- 67:

Սա նշանակում էր, որ հետագա բոլոր քայլերը նոր կառավարությունը կարող էր կատարել առանց Դումայում խոչընդոտի հանդիպելու: Դաշնային խորհրդում ևս զգալի մանդատներ ստացան իշխանությանը սատարող գործիչները: Նման արդյունքը մասամբ պայմանավորված էր նրանով, որ Единая Россия-ի ավելի քան 30 պատգամավորներ շրջանային գործադիր իշխանության ներկայացուցիչներ էին, որոնք իբրև լոկոմոտիվ ծառայելով ընտրություններում, իրենց մանդատները թողեցին[72]: Շատ լիբերալ գործիչներ անգամ դրա համար մեղադրեցին Կրեմլին հին տոտալիտար համակարգը վերականգնելու միտումների մեջ[73]:

Ընտրություններից հետո 2004թ փետրվարի 24-ին նախագահը հրաժարականի ուղարկեց ՌԴ-ն կառավարությանը վարչապետ Մ.Կասյանովին: Մինչ հերթական կառավարության ձևավորումը գործող կառավարության ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվեց Վ.Խրիստենկոն[74]:

---

[70] С.Лурье.,Историческая этнология., Модель русской крестьянской колонизации, М. 1997г. Ст.245.

[71] Результаты ЦИК. На выборых Государственной Думы РФ ,Информационный биолетень от 3 декабря 2003г

[72] Фонд Эберта.,Российская партийная система: нынешнее состояние и перспективы развития,М.2005г., Ст.29

[73] Независимая Газета 1 (3114) от 12.01.2004г

[74] Независимая Газета., 37 (3150) от 25.02.2004г.

Վ.Պուտինը 2004թ. մարտի 1-ին նոր միայն, ընդունեց կառավարության հրաժարականը: Վարչապետի պաշտոնում առաջադրեց Միխայիլ Ֆրադկովի թեկնածությունը: Դուման այն հաստատեց մարտի 5-ին[75]: Տեղեկանքի կարգով նշենք, որ մինչ այդ նա ղեկավարել էր ՌԴ-ն Հարկային ոստիկանությունը: Այս գործիչը շատ խնդիրներում կոշտ դիրքեր ուներ մոնոպոլիստների նկատմամբ[76]:

2004թ. մարտի 14-ի նախագահական ընտրությունները անցավ ընտրողների շատ բարձր ակտիվությամբ, վերլուծաբանները դա գնահատեցին իբրև ավտորիտարիզմի չափորոշիչ[77]: Վ.Պուտինի պարագայում շատ մեծ էր նաև նրա քաղաքական խարիզմայի գործոնը: Նման իրավիճակը հնարավորություն է տալիս քաղաքական իշխանության համար հեռանալ դարձնել նույնիսկ ընտրազանգվածի այն հատվածին, որոնք դեմ են տարվող սոցիալ-տնտեսական քաղաքականությանը, սակայն համակրանքով են մոտենում երկրի լիդերին: Նման մոտեցումը ՌԴ-ն որոշ տեսաբանների մոտ հիմք տվեց հայտարարելու, որ հասարակությունը անկենսունակ է[78]: Նախագահական ընտրության արդյունքներն այսպիսին էին: **Վ. Պուտին (Եդինստվո) 71.31%, Ն. Խարիտոնով (ՌԴԿԿ) 13.69%, Ս.Գլազեվ (Ռոդինա) 4.1%, Ի.Խակամադա (Աջ ուժերի միություն, դեմոկրատներ) 3.84%, Օ.Մալիշկին (ՌԼԴԿ) 2.02%, Ս.Միրոնով (Դաշնային Խորհրդի նախագահ) 0.75%:**

Վ.Պուտինը կատարեց մի բան ինչը չէր հաջողվել անգամ Բ.Ելցինին՝ իր կողմը գրավել Կոմկուսի ընտրազանգվածի 50%-ը: Ընդ որում ինչպես դումայական, այնպես էլ նախագահական ընտրություններում: 2004թ մայիսի 4-ի Վ.Պուտինի երդնմակալության արարողությամբ ՌԴ-ը թևակոխեց նոր զարգացման փուլ, որը տարբերվում է իր որակներով:

---

[75] Российская газета. Центральный выпуск N 3424 от 10 марта 2004 г.
[76] Новая газета. № 15 от 04 Марта 2004 г
[77] Независимая Газета. 51 (3164) от 16.03.2004
[78] Независимая Газета. 50 (3163) от 15.03.2004